ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԺԱՄԸ 11-00-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

- ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝ Առնակ Ավետիսյանի
- Արմավիր համայնքի ղեկավար՝ Դավիթ Խուդաթյանի
- Վաղարշապատ համայնքի ղեկավարի տեղակալ Արսեն Պետրոսյանի
- Մեծամոր համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյանի
- Արաքս համայնքի ղեկավար՝ Ղազար Ղազարյանի
- Խոյ համայնքի ղեկավար՝ Արգիշտի Մեխակյանի
- Փարաքար համայնքի ղեկավար՝ Դավիթ Մինասյանի
- Բաղրամյան համայնքի ղեկավար՝ Շանթ Առաքելյանի
- Ֆերիկ համայնքի ղեկավար՝ Ռուստամ Հասանյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետարանի Գլխավոր քարտուղար՝ Ա.Հովհաննիսյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Սաթենիկ Թովմասյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական՝ Ֆելիքս Պողոսյանի

- ՀՀ Արմավիրի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների

ղեկավարների

- Լրատվամիջոցների ներկայացուցիչների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2022 թվականի սեպտեմբերի 28-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

/Էդվարդ Հովհաննիսյան-
ՀՀ Արմավիրի մարզպետ/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների 2022 թվականի ինը ամիսների բյուջեներով պլանավորված սեփական եկամուտների հավաքագրման և այդ ուղղությամբ համայնքապետարանների կողմից իրականացվելիք վարչարարության վերաբերյալ, առ 20.09.2022թ.դրությամբ

/Էդվարդ Հովհաննիսյան-
ՀՀ Արմավիրի մարզպետ/

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում ինքնակամ շինությունների իրականացման գործընթացի կանխարգելման և կասեցման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների և այդ ոլորտում համայնքապետարանների կողմից իրականացվելիք վարչարարության վերաբերյալ

/ Աշոտ Հովհաննիսյան –ՀՀ Արմավիրի մարզպետարանի
քաղաքաշինության վարչության պետ /

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում իրականացվող աղբահանության և սանիտարական մաքրության վիճակի պատշաճ մակարդակով պահպանության ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների և այդ ոլորտում համայնքապետարանների կողմից իրականացվելիք վարչարարության վերաբերյալ

/ Աշոտ Հովհաննիսյան –ՀՀ Արմավիրի մարզպետարանի
Քաղաքաշինության վարչության պետ /

5.Քաղաքաշինության ոլորտում ընդհանուր իրավիճակի վերաբերյալ իրականացվող մշտադիտարկման մասին

/ Աշոտ Հովհաննիսյան –ՀՀ Արմավիրի մարզպետարանի
Քաղաքաշինության վարչության պետ /

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում գյուղատնտեսական մթերքների մթերման ընթացքի և առկա խնդիրների վերաբերյալ

/ Արթուր Այվազյան –ՀՀ Արմավիրի մարզպետարանի
Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ /

7. 2022 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների վերաբերյալ

/Լիաննա Հարությունյան-ՀՀ Արմավիրի մարզպետարանի

իրավաբանական բաժնի պետ-գլխավոր իրավաբան/

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը ողջունելով նիստի մասնակիցներին, մարզի խորհրդի հաստատմանը ներկայացրեց իր սահմանած **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2022 թվականի սեպտեմբերի 28-ի նիստի օրակարգը:**

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի խորհրդի
Որոշումը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2022 թվականի սեպտեմբերի 28–ի նիստի օրակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30–ի N647-Ն որոշմամբ սահմանված մարզի խորհրդի կազմավորման և գործունեության կարգի 12–րդ կետի պահանջով.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը

որոշում է՝

1. **Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2022 թվականի սեպտեմբերի 28–ի նիստի օրակարգը :**

Օրակարգային երկրորդ՝ հարցով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը ներկայացրեց ՀՀ մարզի համայնքների 2022թ ինը ամիսների բյուջեներերով պլանավորած սեփական եկամուտների հավաքագրման և այդ ուղղությամբ համայնքապետարանների կողմից իրականացվելիք վարչարարության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ որի 30.09.2022թ. ինը ամիսների համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից ընդամենը եկամուտների պլանավորումը կազմել է 7985285.1 հազ.դրամ՝ 30.09.2021թվականին պլանավորված 7703753.9հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 281531.2 հազ. դրամով, 20.09.2022թ -ին փաստացի հավաքագրումը կազմել է 6626886.2 հազ. դրամ , 30.09.2021թվականին հավաքագրված 6961761.6 հազ. դրամի համեմատ, կամ պակաս է հավաքագրվել 334875.4հազ. դրամով, կատարվել է 83.0.ով, նախորդ տարվա 90.4%-ի համեմատ:

30.09.2022թ- ինը ամիսների համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների պլանավորումը կազմել է 3234685.4 հազ.դրամ՝ 30.09.2021թվականին պլանավորված 2474464.5 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 760221.0 հազ. դրամով, 20.09.2022թ -ին փաստացի հավաքագրումը կազմել է 2527151.1 հազ. դրամ , 30.09.2021թվականին հավաքագրված 2236203.8 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 290947.3հազ. դրամով, կատարվել է 78.1%-ով, նախորդ տարվա 90.4%-ի համեմատ:

30.09.2022թ ինը ամիսների համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից անշարժ գույքի հարկի պլանավորումը կազմել է 758388.5հազ.դրամ՝ 30.09.2021թվականին պլանավորված 725184.2 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 33204.3 հազ. դրամով, 20.09.2022թ -ին փաստացի հավաքագրումը կազմել է 497499.3 հազ. դրամ , 30.09.2021թվականին հավաքագրված 450115.9 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 47383.4 հազ. դրամով, կատարվել է 65.6%-ով, նախորդ տարվա 62.1%-ի համեմատ:

30.09.2022թ ինը ամիսների համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից փոխադրամիջոցների գույքահարկի պլանավորումը կազմել է 1184451.4 հազ.դրամ՝ 30.09.2021թվականին պլանավորված 851160.8 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 333290.6 հազ. դրամով, 20.09.2022թ -ին փաստացի հավաքագրումը կազմել է 986462.4 հազ. դրամ , 30.09.2021թվականին հավաքագրված 880942.7 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 105519.7հազ. դրամով, կատարվել է 83.3%-ով, նախորդ տարվա 103.5%-ի համեմատ:

30.09.2022թ ինը ամիսների համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական տուրքերի գծով պլանավորումը կազմել է 160665.3 հազ.դրամ՝ 30.09.2021թվականին պլանավորված 96304.4 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 64360.9 հազ. դրամով, 20.09.2022թ -ին փաստացի հավաքագրումը կազմել է 150322.1 հազ. դրամ , 30.09.2021թվականին հավաքագրված 111141.3հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 39180.7 հազ. դրամով, կատարվել է 93.6%-ով, նախորդ տարվա 115.4 %-ի համեմատ:

30.09.2022թ ինը ամիսների համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից պետական տուրքերի գծով պլանավորումը կազմել է 52675.0 հազ.դրամ՝ 30.09.2021թվականին պլանավորված 39575.0 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 13100.0 հազ. դրամով, 20.09.2022թ -ին փաստացի հավաքագրումը կազմել է 63082.4 հազ. դրամ , 30.09.2021թվականին հավաքագրված 53667.8 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 9414.6 հազ. դրամով, կատարվել է 119.8 %-ով, նախորդ տարվա 135.6%-ի համեմատ:

30.09.2022թ ինը ամիսների համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից հողի և գույքի վարձակալության գծով պլանավորումը կազմել է 132560.4 հազ.դրամ՝ 30.09.2021թվականին պլանավորված 129172.7 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 3387.7 հազ. դրամով, 20.09.2022թ -ին փաստացի հավաքագրումը

կազմել է 124917.2 հազ. դրամ , 30.09.2021թվականին հավաքագրված 102917.8 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 21999.4 հազ. դրամով, կատարվել է 94.2 %-ով, նախորդ տարվա 79.7%-ի համեմատ:

30.09.2022թ ինը ամիսների համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական վճարների գծով պլանավորումը կազմել է 654887.8 հազ.դրամ՝ 30.09.2021թվականին պլանավորված 534935.1 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 119952.8 հազ. դրամով, 20.09.2022թ -ին փաստացի հավաքագրումը կազմել է 508602.1 հազ. դրամ , 30.09.2021թվականին հավաքագրված 464186.7 հազ. դրամի համեմատ, կամ ավել է հավաքագրվել 44415.4հազ. դրամով, կատարվել է 77.7%-ով, նախորդ տարվա 86.8%-ի համեմատ:

Մարզպետը ըստ հարկատեսակների իրականացված հավաքագրումների վերաբերյալ նշված տեղեկատվության համաձայն նշեց, որ չնայած որոշ համայնքներում ինը ամիսների կատարողական պատկերի մեջ ցուցանիշները բարելավվել են, սակայն տարեկան պլանի համեմատ որոշակի մտահոգությունները դեռևս շարունակվում են և անելիքներ շատ կան:

ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը գոհացուցիչ չհամարելով գրանցված ցուցանիշները, ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց

Միջոցներ կիրառել հավաքագրումների մակարդակը բարելավելու ուղղությամբ, իրականացնել ակտիվ և գործնական աշխատանքներ՝ տարեվերջին բացառելով կատարողականի ապահովմամբ պայմանավորված խնդիրները:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը առաջարկեց նաև վերանայել համայնքների բյուջեների պլանավորումը, մի շարք օբյեկտիվ պատճառների արդյունքում առաջացած աճման կամ նվազման անհրաժեշտությամբ պայմանավորված:

Օրակարգային երրորդ հարցի՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում ինքնակամ շինությունների իրականացման գործընթացի կանխարգելման և կասեցման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների և այդ ոլորտում համայնքապետարանների կողմից իրականացվելիք վարչարարության վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության կողմից Արմավիրի մարզի համայնքներում ինքնակամ շինարարական աշխատանքները կանխելու, կասեցնելու և հաշվառելու ուղղությամբ կատարվել են հետևյալ գործառույթները.

1. ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին, ինչպես նաև ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության պետին տեղեկացվել է ՀՀ վարչապետի կողմից տրված հանձնարարականի մասին, համաձայն որի՝ անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր օրենքով թույլատրելի միջոցները կապված

ինքնակամ շինարարությունների կանխման և կասեցման վերաբերյալ /ՀՀ կառավարության 09.12.2021թ. նիստի N 61 արձանագրություն/:

2. ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին տեղեկացվել է մինչև 2022թ. հունվարի 6-ը ինքնակամ կառույցների հաշվառման և (կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածների) օրինականացման ՀՀ օրենսդրության դրույթների մասին:
3. ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին տեղեկացվել է, որ անհրաժեշտ է կատարել մարզում գտնվող համայնքային և պետական կարիքների համար կառուցված, սակայն ներկայումս ինքնակամ համարվող կառույցների գույքագրում, չափագրում և դրանք ներկայացնել ՀՀ կադաստրի կոմիտե հաշվառման, որոնց արդյունքները պահանջվող ձևաչափին համապատասխան ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
4. ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին տեղեկացվել է, որ անհրաժեշտ է գույքագրել 2022թ. հունվարի 6-ից մինչև սեպտեմբերի 20-ը ընկած ժամանակահատվածում ինքնակամ շինարարությունները և ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետարան, որն էլ ՀՀ Արմավիրի մարզպետի 29.06.2022թ. N01/7/03961-2022 գրությամբ, պահանջվող ձևաչափին համապատասխան, ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Ներկա պահին արձանագրվել է ՀՀ Արմավիրի մարզում, 2022թ. հունվարի 6-ից մինչև սեպտեմբերի 20-ը ընկած ժամանակահատվածում իրականացված /կառուցված/ 33 ինքնակամ համարվող շինություններ, որոնց նկատմամբ իրականցվել կամ իրականացվում են վարչական վարույթներ /կասեցում, քանդում, տուգանում և այլն/:

Ներկայացվեց ըստ համայնքների արձանագրված ինքնակամ համարվող շինությունների քանակական ցանկը.

Արմավիր՝ 2 շինություն,
Վաղարշապատ՝ 1 շինություն,
Մեծամոր՝ 7 շինություն,
Արաքս՝ 6 շինություն,
Փարաքար՝ 5 շինություն,
Խոյ՝ 3 շինություն,
Բաղրամյան՝ 9 շինություն:

Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, արդեն արգելվում է ինքնակամ կառույցների օրինականացումը և վերջիններս ենթակա են քանդման: Ընդ որում, ինքնակամ կառույցների քանդման համար նույնպես նախատեսվում է երկու ռեժիմ: Առաջին իրավիճակը վերաբերում է հողամասի սեփականատիրոջ կողմից իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդմանը (ապամոնտաժմանը): Այսինքն՝ հողամասի սեփականատերը կարող է առանց արդադատական կարգով քանդել իր հողամասում

գտնվող ինքնակամ կառույցը: Երկրորդ իրավիճակը վերաբերում է ուրիշի հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման հնարավորությանը, որը իրականացվում է բացառապես դատական կարգով:

Պետական կամ համայնքային հողամասերում կառուցված ինքնակամ կառույցների քանդման մասին որոշումները կայացվում են համայնքի ղեկավարի կողմից:

Ներկայացված խնդիրների վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետի 2022 թվականի համապատասխան շրջաբերական գրություններով համայնքների ղեկավարներին իրազեկվել և հանգամանորեն ներկայացվել է ոլորտը կարգավորող իրավակարգավորումները:

Համայնքապետարանների առաջնահերթ խնդիրն եմ համարում ապահովել համայնքների ազգաբնակչության պատշաճ իրազեկումը, որ սահմանված ժամկետներում և կարգով ինքնակամ շինությունների հաշվառումն իրականացնելը բխում է իրենց իսկ շահերից:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը անդրադառնալով ներկայացված օրակարգային հարցին, նշեց, որ այս ոլորտում իրականացված աշխատանքները ոչ լիարժեք են և հավուր պատշաճի չեն ներկայացվում ազգաբնակչությանը, որի հետևանքով էլ առաջանում են մի շարք խնդիրներ:

ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը մարզի համայնքերի ղեկավարներին առաջարկեց

Աշխատանքային ընթացակարգով և պատասխանատու կերպով շարունակել իրականացնել ինքնակամ շինությունների հաշվառման աշխատանքները:

Օրակարգային չորրորդ հարցի՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում իրականացվող աղբահանության և սանիտարական մաքրության վիճակի պատշաճ մակարդակով պահպանության ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների և այդ ոլորտում համայնքապետարանների կողմից իրականացվելիք վարչարարության վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում աղբահանության վճար վճարող ֆիզիկական անձանց թիվը կազմում է 230654 մարդ, իսկ աղբահանության պայմանագիր կնքած վճար վճարող իրավաբանական անձանց թիվը՝ սեպտեմբերի 1-ի դրությամբ կազմում է 1911-ը:

ՀՀ Արմավիրի մարզի 2022թ. տարեկան աղբահանության եկամուտի համար պլանավորվել է 397 091 600 ՀՀ դրամ: 2022 թվականի ընթացիկ 8 ամիսների ընթացքում եկամուտի մասով աղբահանության համար ենթակա էր հավաքագրման 304 101 000 ՀՀ դրամ, սակայն 8 ամիսների ընթացքում հավաքագրվել է 170 240 200 ՀՀ դրամ, որից՝ ֆիզիկական անձանցից- 139 693 223 ՀՀ դրամ, իսկ տնտեսվարող սուբյեկտներից՝ - 30 546 977 ՀՀ դրամ: Աղբահանության համար համայնքների կողմից 8 ամիսների ընթացքում ծախսվել է շուրջ 495 216 476 ՀՀ դրամ:

ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ, Արմավիր, Մեծամոր և Ֆերիկ համայքներում աղբահանությունն իրականացվում է համայնքների բարեկարգման

ծառայությունների կողմից, Բաղրամյան և Խոյ համայնքներում մասնակի՝ համայնքների և այլ տնտեսվարող կազմակերպությունների կողմից, իսկ Փարաքար և Արաքս համայնքներում՝ տնտեսվարող կազմակերպությունների կողմից:

ՀՀ Արմավիրի մարզում առկա են 3 օրինական աղբավայրեր և *ժամանակավոր 41 բացվող և փակվող հիմնական աղբավայրեր: Աղբավայրերի տարածքների մեծ մասը ցանկապատված չեն:*

Համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների պատշաճ մակարդակով իրականացման, սանիտարահիգիենիկ իրավիճակի բարելավման, աղբահանության վարձավճարների կատարողական ցուցանիշների բարձրացման, աղբահանության ծախսերի և եկամուտների հստակ հավաքագրումն ապահովելու համար, առաջարկում եմ համայնքների ղեկավարներին հետևողական լինել աղբահանության եկամուտների հավաքագրման մասով, և շարունակել պայմանագրեր կնքել համայնքներում առկա տնտեսվարող սուբյեկտների հետ, *աղբավայրերում կուտակված աղբը շաբաթական 2 անգամ հրել հորանցք և ծածկել հողով՝ պահպանելով բնապահպանական նորմերի անվտանգության կանոնները,* հետևել աղբավայրերում հակահրդեհային կանոնների պատշաճ պահպանմանը, *հնարավորինս կազմակերպել աղբավայրերի տարածքների ցանկապատումը և նրանց շուրջ սանիտարական գոտիների իրականացումը*. վերահսկողություն իրականացնել, ինչպես, համապատասխան կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների պայմանագրերով ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու, այնպես էլ համայնքների կողմից իրականացվող աղբահանության աշխատանքների նկատմամբ:

Անդրադառնալով վերը նշված օրակարգային հարցին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը փաստեց, որ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները շարունակում են լինել համայնքների կարևոր խնդիրներից և համայնքներում առավել քան պետք լինեն հստակ և ռեալ խնդրի կարգավորման նպատակով մոտեցումներ, ուշադրության ներքո պահվեն պայմանագրերի կնքման գործընթացները և այդ գործառույթին առնչող անելիքները: Մարզպետը խիստ կարևորելով համայնքներում սանիտարական պատշաճ վիճակի ապահովումը առաջարկեց

Գործուն քայլեր ձեռնարկել աղբահանության գործընթացը հնարավորինս սեղմ ժամկետներում իրավական դաշտ բերելու և լիարժեք իրականացնելու համար:

Օրակարգային հինգերորդ հարցով ՀՀ Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանը ներկայացրեց քաղաքաշինության ոլորտում ընդհանուր իրավիճակի վերաբերյալ իրականացվող մշտադիտարկման մասին տեղեկատվությունը: ՀՀ Արմավիրի մարզում ավարտված սուբվենցիոն ծրագրերի մասով մշտադիտարկում իրականացնելու նպատակով, ՀՀ Արմավիրի մարզպետի որոշմամբ և մարզպետարանի գլխավոր քարտուղարի 25.04.2022թ. ՈԳՔՀ/237-2022թ, հրամանով, 2022թ. ապրիլի 25-29 ընկած

ժամանակահատվածում, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՀՀ Արմավիրի մարզպետարանի համապատասխան մասնագետների, ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարների /ներկայացուցիչների/ մասնակցությամբ մշտադիտարկում է իրականացվել ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում 2020-2021թթ.. ավարտված և շահագործման հանձնված սուբվենցիոն ծրագրերով իրականացված թվով 53 օբյեկտներում:

Մշտադիտարկման արդյունքում տարբեր տիպի մասնակի թերություններ են/ոչ խնդրահարույց/ արձանագրվել թվով 25 ծրագրերում:

ՀՀ Արմավիրի մարզպետի 27.05.2022թ.թիվ 01/7/03241-2022թ. գրությամբ, մարզի համայնքների ղեկավարներին առաջարկվել հանձնարարվել է ծրագրերն իրականացնող և շահագործման հանձնած կապալառու կազմակերպությունների ներգրավմամբ, հնարավորինս սեղմ ժամկետներում արձանագրված թերությունները վերացնել և արդյունքների մասին տեղեկացնել մարզպետարան:

Մարզպետարանի քաղաքաշինության վարչության կողմից հսկողություն է սահմանվել մշտադիտարկման արդյունքում արձանագրված թերությունները վերացնելու ուղղությամբ, որի կատարման արդյունքների մասին պարբերաբար տեղեկացվել է ՀՀ Արմավիրի մարզպետին, իսկ վերջնական արդյունքների մասին՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 23 սեպտեմբերի 2022թ. թիվ ԳՍ/20.1/25359-2022թ, գրությամբ՝ թերությունների վերացման վերջնաժամկետ է սահմանվել 2022 թվականի հոկտեմբերի 21-ը:

Ներկա պահին արձանագրված թերությունները վերացվել են 19 ծրագրերում /օբյեկտներում/, 6 ծրագրերով նախատեսված աշխատանքներն ընթացքի մեջ են /Փարաքար համայնք- Ի. Գասպարյան, Մեքենագործների և Վ. Մամիկոնյան փողոցների ասֆալտապատման աշխատանքներ/ գտնվում է ավարտական փուլում/, Մեծամոր համայնք -2 ծրագիր՝ Ակնալիճ բնակավայրի Շահումյան փողոցի մի հատվածի ասֆալտապատում, Նալբանդյան բնակավայրում՝ մշակույթի տան մի մասի վերանորոգում, Վաղարշապատ համայնք-3 ծրագիր՝ Էջմիածին քաղաքի Սպանդարյան և Կամո փողոցների ասֆալտապատում, Էջմիածին քաղաքի Վազգեն Ա և Վ. Կոստանյան փողոցների մայթերի վերանորոգում, Ոսկեհատ բնակավայրի հանդիսությունների սրահի ներքին հարդարում:

2022 թվականի սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման ընթացքում արձանագրվել են մի շարք թերություններ՝

1. Արաքս համայնքի Գայ բնակավայրի մանկապարտեզի պորտալի վերևի հատվածում, վիտրաժների կարկասներում, դահլիճի օդափոխության համակարգում հայտնաբերվել են մի շարք թերություններ: Տրվել է ցուցում շինարարի, տեխ. հսկիչի և հեղինակի փոխհամագործակցությամբ նշված թերությունները վերացնելու համար:

2. Ապագա բնակավայրի մարզադահլիճի նախագծա-նախահաշվային փաստաթղթերում արձանագրվել են թերի ծավալներ և որոշակի ավել, նախկինում իրականացված ծավալներ:

Արձանագրված թերությունների մասով տրվել է ցուցում շինարարի, տեխ. հսկիչի և հեղինակի փոխհամագործակցությամբ նշված թերությունները վերացնելու համար:

Հաճախակի շինարարական օբյեկտների կոնստրուկտիվ մասերում և ծավալներում շինարարի կողմից կատարվում են փոփոխություններ և վերջում ներկայացվում են համադրումով առանց համայնքի ղեկավարի և մասնավոր դեպքերում հեղինակի հետ համաձայնեցման:

Անհրաժեշտ է համայնքներում իրականացվող շինարարական աշխատանքների նկատմամբ համայնքապետարանների քաղաքաշինության բաժինների միջոցով պարբերաբար իրականացնել մշտադիտարկում, շինարարության սկզբնական փուլում հայտնաբերել, վեր հանել թերությունները դրանք ժամանակին շտկելու և հետագայում բացառելու համար:

Անդրադառնալով ներկայացված տեղեկատվությանը Հայատանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը նշեց, որ սուբվենցիոն ծրագրերի կատարման մասով ակտիվ փուլում ենք, կատարվել են որոշակի փոփոխություններ այս գործընթացում, համաձայն որի, պետք է ուսումնասիրվեն նախորդ տարի կատարված աշխատանքների որակը, ժամկետները, վերացվեն խախտումները և մարզպետարանի համապատասխան աշխատակիցները սկսել են շրջայցեր կատարել, որպեսզի ժամանակին հայտնաբերվեն խախտումները և թերությունները վերացվեն, հետագայում առավել բարդություններից զերծ մնալու համար:

ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը համայնքների ղեկավարներին առաջարկեց՝

Ամենայն պատասխանատվությամբ մոտենալ վերը նշված գործընթացին և համայնքների աշխատակազմերի պատասխանատուների միջոցով շաբաթական կտրվածքով իրականացնել այցելություններ շինհրապարակներ, խնդիրները և բացթողումները տեղում և ժամանակին վեր հանելու, ուղղելու և ընթացիկ աշխատանքներն արդյունավետ իրականացնելու նպատակով:

Օրակարգային վեցերորդ հարցով ելույթ ունեցավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում գյուղատնտեսական մթերքների մթերման ընթացքի և առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվությունը: 2022թվականի հունիսի 1-ի դրությամբ մարզում ցանքատարածությունները կազմել են 25081,2 հեկտար: Գյուղատնտեսական արտադրության մեջ օգտագործվել է 42429 հեկտար՝ ներառյալ բազմամյա տնկարքները:

2022 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ մարզում արտադրվել է

1. Հացահատիկ և հատիկաընդեղեն - 12,7 հազար տոննա

2. Կարտոֆիլ - 39,1 հազար տոննա
3. Բանջարեղեն - 196 հազար տոննա
4. Բոստան - 68,7 հազար տոննա
5. Պտուղ և հատապտուղ - 61, 7 հազար տոննա
6. Խաղող - 9,8 հազար տոննա
7. Բազմամյա խոտ - 77,8 հազար տոննա

Ի դեպ,գյուղատնտեսական մթերքների իրացման հարցը մշտապես գտնվում է ՀՀ կառավարության և մարզպետի ուշադրության կենտրոնում:

Գյուղատնտեսական մթերքների իրացման աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով վերամշակող կազմակերպությունների և արտահանող սուբյեկտների հետ կազմակերպվել են մի շարք խորհրդակցություններ, հանդիպումներ:

Մարզում տեղակայված մթերող կազմակերպությունների կողմից մթերվել է 8210 տոննա պտուղ բանջարեղեն՝ որից բանջարեղեն 4457 տոննա, պտուղ 3753 տոննա:

Եթե պտուղ, բանջարեղենի մթերման գործընթացում խնդիրներ չեն առաջացել, ապա նույնը չի կարելի ասել խաղողի մթերման դեպքում:

Մարզում տեղակայված մթերող կազմակերպությունների կողմից սեպտեմբերի 26-ի դրությամբ մթերվել է 35551տոննա խաղող: Գործող մթերող կազմակերպությունները պատրաստակամություն են հայտնել մթերելու 76000տոննա խաղող՝ այսինքն դեռևս խնդրահարույց է շուրջ 14հազար տոննա խաղողի մթերման հարցը:

Մարզպետարանը աշխատանքներ է տանում ինչպես էկոնոմիկայի նախարարության, այնպես էլ այլ մարզերում տեղակայված խաղող մթերող կազմակերպությունների հետ՝, ավելցուկ հանդիսացող խաղողի քանակը մթերելու նպատակով:

ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը օրակարգային հարցի վերաբերյալ նշեց , որ ներկայումս չնայած պայմանագրային հիմունքներով շարունակվում է խաղողի մթերման գործընթացը, սակայն մարզը դեռևս ունի 25-30 հազար տոննա խաղողի մթերման խնդիր, որի լուծման համար աշխատանքները շարունակվում են:

Օրակարգային յոթերորդ հարցով հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ-գլխավոր իրավաբան Լիաննա Հարությունյանը ներկայացնելով 2022 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի նոյեմբերի 11-ի N67-Լ հրամանով հաստատված տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2022 թվականի աշխատանքային ծրագրի համաձայն, ՀՀ Արմավիրի մարզպետի 2022 թվականի ապրիլի 4-ի ՆՄՈ/208-2022 որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքում 2022 թվականի երկրորդ եռամսյակում իրականացվել է իրավական հսկողություն, որի արդյունքում կազմված համապատասխան փաստաթղթերը՝

արձանագրությունը և հարցաշարը, սահմանված կարգով և ժամկետներում հրապարակվել են ՀՀ Արմավիրի մարզպետարանի պաշտոնական կայքէջում՝ http://armavir.mtad.am/:

Աշխատանքային խմբի կողմից իրավական հսկողությունն իրականացվել է «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով:

Իրավական հսկողության արդյունքում կազմված հարցաշարով՝

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջներին համապատասխան համայնքի ավագանու կողմից հաստատված չի եղել տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգը (հարցաշարի 17-րդ կետի 2-րդ ենթակետ), որն էլ իրավական հսկողության ժամկետի ավարտից հետո հաստատվել է համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 9-ի N167-Ա որոշմամբ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի պահանջին համապատասխան համայնքի ավագանու կողմից հաստատված չի եղել համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը (հարցաշարի 29-րդ կետ և 57-րդ կետի 8-րդ ենթակետ), որը նախատեսվել և որպես օրակարգային հարց ընդգրկվել է համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 28-ին կայանալիք հերթական նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգում:

Չնայած այն հանգամանքին, որ իրավական հսկողության արդյունքում արձանագրվել է, որ համայնքապետարանում «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի «դ» և «է» ենթակետերի պահանջների համաձայն առկա են քաղաքացիական պաշտպանության և Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պլանները, այդուհանդերձ՝ դրանք լրամշակելու և ՀՀ ԱԻՆ Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ համաձայնեցնելու առաջարկություն է ներկայացվել աշխատանքային խմբի կողմից (հարցաշարի 56-րդ կետի 11-րդ և 13-րդ ենթակետեր), որոնք էլ իրավական հսկողության ժամկետի ավարտից հետո լրամշակվել են համայնքի ղեկավարի 552-Ա, ինչպես նաև N836-Ա որոշումներով:

«Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջի համաձայն, նշված բնագավառում համայնքի ղեկավարի իրավասություններից է գերեզմանատների կառուցապատման հատակագծեր (օգտագործման սխեմաներ) մշակելը և հաստատելը (հարցաշարի 57-րդ կետի 22-րդ ենթակետի «դ» պարբերություն), որի հիմքով աշխատանքային խմբի կողմից համայնքի ղեկավարին առաջարկվել է մշակել Արմավիր խոշորացված համայնքի բնակավայրերի համար գերեզմանատների կառուցապատման հատակագծերը (օգտագործման

սխեմաները), սահմանելով ժամկետ՝ հաջորդ հերթական նստաշրջանի գումարման ընթացքում, սակայն Արմավիր համայնքի ղեկավարի կողմից ներկայացված 2022 թվականի սեպտեմբերի 7-ի N2750 գրությամբ տեղեկացվել է, որ նշված գործընթացն իրականացնել հնարավոր չէ ավագանու հաջորդ հերթական նստաշրջանի գումարման ընթացքում, քանի որ այն բացի ընդհանուր մոտեցումից, պայմանավորված է նաև ֆինանսական մեծ ներդրումներից, որի պատճառով էլ նշված հարցին անդրադառնալ կիրականացվի ֆինանսական միջոցների առկայության պայմաններում:

Նշվեց նաև, որ Արմավիր քաղաքի մասով ներկայացված օրենսդրական պահանջը կատարված է եղել:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջի համաձայն՝ ֆինանսների բնագավառում, որպես սեփական լիազորություն, համայնքի ղեկավարն օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Նշված հիմքով մարզի նախկին Սարդարապատ համայնքի մասով հայտնաբերվել են խախտումներ, որոնց հետագա ընթացքը լուծելու համար դրանք ներկայացվել են համապատասխան մարմին (հարցաշարի 55-րդ կետի 6-րդ ենթակետի):

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը օրակարգային հարցի առընչությամբ համայնքների ղեկավարներին առաջարկեց

Ուշադրության կենտրոնում պահել և գործնական միջոցներ ձեռնարկել իրավական և մասնագիտական հսկողության իրականացմամբ հայտնաբերված թերությունները և բացթողումները վերացնելու գործընթացը:

Օրակարգային հարցերի քննարկման ու ամփոփման ավարտից հետո Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 07.10.2022 15:00:58 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ